ԷԴՈՒՀԱԲ երիտասարդական կազմակերպության
նախագահ Գնորգ Հարությունյանից

ԷԴՈՒՀԱԲ երիտասարդական կազմակերպությունը ստեղծվել է 2018 թվականին , բերելով նոր շունչ, գաղափարներ և ծրագրեր Հայաստանյան իրականություն: Ստեղծվելու պահից մինչ այսօր կազմակերպությունն իրականացրել է 20-ից ավել նախագծեր Հայաստանում, Եվրոպայում , Ասիայում , Ամերիկայում և Աֆրիկայում: Մեր ծրագրերի կենտրոնական թեմաներն  են  Մեդիան , Ժուռնալիզմը, Թվային փոխակերպումը, Երիտասարդական ակտիվությունը , Ժողովրդավարական ակտիվությունը և այլն: Ստեղվելուց ի վեր մենք նախագծեր ենք իրականացրել այնպիսի հեղինակավոր կազմակերպությունների և մարմինների հետ ինչպիսիք են Եվրոպական հանձնաժողովը , Գերմանիայի Արտաքին Գործերի Նախարարությունը , Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությունը , Գերմանական Մեդիայի և Հաղորդակցության քաղաքականության ինստիտուտը ,Իտալական gaeragErasmus հիմնադրամը և այլն:  Վերջիին տարիներին ԷԴՈՒՀԱԲ-ը կազմակերպել է հարյուրավոր դասընթացներ , սեմինարներ , առցանց և ֆիզիկական հանդիպում-քննարկումներ, աշխատարաններ թե՛ Հայաստանում թե՛ Հայաստանից դուրս, հիմնականում ներգրավելով հայ երիտասարդների: Նպատակը երիտասարդների կարողությունների բարձրացումն է , նրանց ձայնը լսելի դարձնելն է , նրանց մասնակցությունը հասարակական խմորումներին և իրադարձություններին ավելի իմաստավոր դարձնելն է: 2023-ին մեր կարևոր նախագծերից էր Վիետնամի Հանոյ քաղաքում տեղի ունեցած սեմինարների շարքը: Միջազգային այդ սեմինարների շարքը ուղղված էր Հարավ Արևելյան Ասիական երկրների բազմաթիվ երիտասարդների մեդիագիտելիքներ փոխանցելու գաղափարին , ստացված գիտելիքի  օգնությամբ էլ երիտասարդները սկսեցին զբաղվել փաստերի ստուգմամբ, խնդիրների արդյունավետ հասցեագրմամբ, քաղաքացիական իրավունքներն ու պարտավորություններն արդյունավետ իրացնելուն և այլն: Մեր կազմակերպությունը լինելով Հայաստանյան, ի զորու է եղել արտասահմանում

կազմակերպել նմանատիպ սեմինարներ: Այդպիսի նախադեպ դեռ Հայաստանի Հանրապետության պատմության մեջ չի եղել, և շատ դրական է ազդել Հայաստանի Հանրապետության ընդհանրական իմիջի վրա: Հանոյում մեզ որոշակի օգնություն է ցուցաբերել ՀՀ դեսպանը Վիետնամում: Մեկ այլ մեծ և հատկանշական ծրագիր իրականացրել ենք 2024-ին ,Գերմանական Մեդիայի և Հաղորդակցության քաղաքականության ինստիտուտի հետ համատեղ և Գերմանիայի Արտաքին Գործերի Նախարարության բարձր հովանո ներքո: Այդ ծրագիրը ուղղված էր Հայաստանում ժուռնալիզմի զարգացմանն, թափանցիկ լրագրության մեխանիզմների ուսումնասիրմանը և ավելի կարող լրագրողներ պատրաստելուն: Իրականացրել ենք մի քանի ամսյա սեմինարների շարք Հայ լրագրողների համար Հայաստանում և Գերմանիայում: Մեր ամենավերջին իրականացված նախագիծը «Ներգրավվելով Կովկաս»-ը իրականացրել ենք Երևանում և Թբիլիսում: Ծրագրի նպատակն էր հայ և վրացի երիտասարդներին օգնել խնդիրների հասցեագրման ճիշտ ռազմավարություն մշակել թե՛ մեդիա տիրույթում թե՛ դրանից դուրս: Որպես ամփոփում , մենք կարող ենք հպարտորեն նշել, որ ի շնորհիվ ԷԴՈՒՀԱԲ- հազարավոր երիտասարդներ բարձրացրել են իրենց կարողությունները , ձեռք են բերել նոր հմտություններ, ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն են ստացել տարատեսակ ԲՈՒՀ-երում և ինստիտուտներում, ստացել են քաղաքացիական կրթություն և դարձել են այդ կրթության տարածողները , դրանով նաև իրենց և իրենց համայնքին դարձնելով ժողովրդավարական պրոցեսների ակտիվ մասնակից:

Գևորգ Հարությունյան
16.12.2024

www.facebook.com/EduHubyouth/ +37498888057 eduhub.youth@gmail.com www.eduhub.am